Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը Los Angeles-ի միացյալ դպրոցական շրջանի ուսանողների ընտանիքների համար

Ինչպե՞ս է Մարդահամարն անդրադառնալու LAUSD ուսանողների և նրանց ընտանիքների վրա:

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը (LAUSD) երկրի երկրորդ ամենամեծ դպրոցական շրջանն է, որն ունի մոտ 694,096 K-12 ծրագրով սովորող մանկահասակ երեխաներ և ավագ ուսանողների կրթություն: Կարևոր է, որ ուսանողներն ու իրենց ընտանիքները մարդահամար անցնեն՝ երաշխավորելու, որ քաղաքը ստանա Head Start-ի, հատուկ կրթության, Լրացուցիչ կրթական դասընթացների դրամաշնորհների նման ճգնաժամային կրթական ծրագրերի դաշնային ֆինանսավորման իր բաժինը ցածր եկամուտ ունեցող համայնքների դպրոցների և դպրոցական ճաշերի համար:

Ե՞րբ և ինչպե՞ս պետք է պատասխանեմ Մարդահամարի հարցաթերթիկին:

2020թ սկզբներին ձեր տուն ծանուցում կուղարկվի, որում կլինեն ցուցումներ այն մասին, թե ինչպես պետք է առցանց լրացնել մարդահամարի հարցաթերթիկը: Մարդահամարի օրը 2020թ. ապրիլի 1-ն է: Դուք կարող եք նաև լրացնել հարցաթերթիկը՝ զանգահարելով անվճար հեռախոսահամարին, լրացնելով թղթային հարցաթերթիկը, որը էլ. փոստով կուղարկվի ձեր տուն առցանց չպատասխանելու դեպքում կամ սպասել, որ մարդահամար անցկացնողը թակի ձեր դուռը: Եթե տանը համացանցի հասանելիություն չունեք, կարող եք գնալ Los Angeles քաղաքի և շրջանի դպրոցներում և այլ վայրերում գտնվող հարյուրավոր Մարդահամարի գործողությունների կենտրոններից մեկը:

Կարո՞ղ եմ հարցաթերթիկը լրացնել իմ մայրենի լեզվով:

Հարցաթերթիկը (և անվճար հեռախոսահամարին զանգահարելու տարբերակը) հասանելի կլինի առցանց անգլերենով և 12 հավելյալ լեզվով (Իսպաներեն, չինարեն, վիետնամերեն, կորեերեն, ռուսերեն, արաբերեն, թագալերեն, լեհերեն, ֆրանսերեն, Հայիթիի կրեոլերեն, պորտուգալերեն և ճապոներեն): Թղթային հարցաթերթիկը հասանելի կլինի միայն անգլերենով և իսպաներենով: Ինչևէ, U.S. Մարդահամարի Բյուրոն կունենա 59 ոչ անգլերեն լեզվով բառարաններ և ուղեցույցներ:

Կարո՞ղ եմ Մարդահամարի մասին ավելի շատ տեղեկություններ ստանալ երեխայիս դպրոցից:

2019թ.-ին որպես իրենց քարոզարշավի մի մաս LAUSD-ն կանցկացնի մարդահամարի մասին սեմինարներ ընտանիքների համար. Մենք մեկ միասնական L.A. ենք. Կանգնած ենք ներգաղթյալ ընտանիքների կողքին: Իրենց այլ առկա որոշ ծրագրերի շրջանակներում LAUSD-ն նաև բազմաթիվ լեզուներով կներկայացնի մարդահամարի մասին տեղեկություններ ծնողների և ուսանողների համար:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census